Համայնքային ծառայության թափուր պաշտոնի
ՀՀ Գեղարքունիքի մարզի Ն. Գետաշենի գյուղապետարանը հայտարարում է մրցույթ՝ Ն. Գետաշենի գյուղապետարանի ֆինանսատնտեսական բաժնի պետի /ծածկագիր 2.1-2 / թափուր պաշտոն զբաղեցնելու համար:
ֆինանսատնտեսական բաժնի պետը՝
ա)Բաժնում կազմակերպում, ծրագրում, համակարգում, ղեկավարում և վերահսկում է աշխատանքները.
բ)կատարում է բաժնի գործունեության բնագավառում վարվող քաղաքականության մասով՝ համայնքի ղեկավարի, իսկ համայնքային ծառայության ղեկավարման և կազմակերպման մասով՝ աշխատակազմի քարտուղարի հանձնարարականները.

գ) պատասխանատվություն է կրում օրենքների, համայնքի ղեկավարի որոշումների և
կարգադրությունների, այլ իրավական ակտերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, կամ լիազորությունները վերազանցելու, բաժնի առջև դրված խնդիրները և տրված հանձնարարականները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար.
դ) լուծում է բաժնի առջև դրված գործառույթներից բխող հիմնախնդիրներ, ընդունում որոշումներ.

ե) համայնքի ղեկավարի և (կամ) քարտուղարի հանձնարարությամբ մասնակցում է տեղական ինքնակառավարման մարմինների և աշխատակազմի ռազմավարական, կազմակերպական և մասնագիտական նշանակության խնդիրների բացահայտմանը, վերլուծմանը, ինչպես նաև դրանց ստեղծագործական և այլընտրանքային լուծումներ տալու աշխատանքներին.
զ)իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:
է/Բաժնի պետն ունի օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ:
ը/ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.
թ/Տիրապետում է որևէ օտար լեզվի /կարդում և կարող է բացատրվել/:
ժ/ ստորագրում է իր կողմից պատրաստվող փաստաթղթերը.
Սույն պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է բարձրագույն մասնագիտական կրթություն, համայնքային կամ քաղաքացիական ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ կամ վերջին հինգ տարվա ընթացքում համայնքի ավագանու անդամի աշխատանքային գործունեության առնվազն երկու տարվա փորձ կամ առնվազն երեք տարվա

մասնագիտական աշխատանքային ստաժ կամ մինչև 2015 թվականի հունվարի 1-ը՝ համայնքային ծառայության, պետական կամ համայնքային կառավարման ոլորտի առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ, ունի <<Համայնքային ծառայության մասին>>, <<Տեղական ինքնակառավարման մասին>>, <<Բյուջետային համակարգի մասին>>, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>>, <<Գույքահարկի մասին>>, <<Հողի հարկի մասին>>, <<Հաշվապահական հաշվառման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված իրավական այլ ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

Տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը.

Դիմող ՀՀ քաղաքացիները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝ Դիմում մրցութային հանձնաժողովի անունով /ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս/, տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկունից ներկայացվող պահանջների բավարարումը հաստատող փաստաթղթերի՝ դիպլոմի, անձնագրի պատճենները՝ բնօրինակների հետ միասին, արական սեռի անձանց համար նաև զինվորական գրքույկ կամ դրան փոխարինող ժամանակավոր և զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենները՝ բնօրինակի հետ միասին, մեկ լուսանկար 3x4 սմ չափսի, հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում ՀՀ կառավարության 2011թ. դեկտեմբերի 15-ի N 1801-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով, որը հանրային ծառայության պաշտոնում նշանակվելու դեպքում կարող է խոչընդոտել ծառայողական պարտականությունների կատարմանն ու լիազորությունների իրականացմանը, հայտարարություն այն մասին, որ ինքը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ:

ՀՀ քաղաքացին մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ ներկայացնելով անձնագիր: Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր, բացի շաբաթ և կիրակի օրերից՝ Նեքին Գետաշենի գյուղապետարանի կամ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմում մինչև 2014 թվականի մարտի 20-ը:

Մրցույթը կայանալու է 2014 թվականի ապրիլի 6-ին՝ ժամը 12-^{00}, Նեքին Գետաշենի գյուղապետարանում:

Մանրամասն տեղեկությունների համար դիմել Նեքին Գետաշենի գյուղապետարանի աշխատակազմ՝ կենտրոն թաղ. 5 փողոց 7 շենք,

հեռ. /0262/ 4-26-01: